«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 1457-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ _____ 2021 թվականի N _____- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1457-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Ազգային անվտանգության ծառայության համակարգերի զինծառայողների, փրկարարական ծառայողների իրային ապահովության կարգը (չափաքանակները) սահմանելու մասին» N 1457-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 3 չափաքանակի՝

ա. 13-րդ կետից հետո լրացնել 13.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«

13.1. Բերետ՝ բրդյա	1 հատ	2 տարի	12

».

բ. 14-րդ կետի «Անվանումը» սյունակում «Կոստյում՝ ձմեռային, դաշտային» բառերը փոխարինել «Բաճկոն՝ ձմեռային» բառերով.

գ. ուժը կորցրած ճանաչել 22-րդ կետը.

դ. 23-րդ կետում «2 հատ» բառերը փոխարինել «3 հատ» բառերով.

ե. 28-րդ կետում «4 տարի» բառերը փոխարինել «5 տարի» բառերով.

զ. 28-րդ կետից հետո լրացնել 29-31-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«

29	Մահակի պատյան	1 հատ	5 տարի	12
30	Արցունքաբեր գազի պատյան	1 հատ	5 տարի	12
31	Ձեռնաշղթայի պատյան	1 հատ	5 տարի	12

».

2) N 3 չափաքանակի աղյուսակին հաջորդող 1-ին կետում «ամենօրյա» բառից հետո լրացնել «, շտաբային և դաշտային» կետադրական նշանն ու բառերը.

3) N 3 չափաքանակի աղյուսակին հաջորդող 5-րդ կետի՝

ա. 12-րդ ենթակետում «Կոստյում՝ ձմեռային, դաշտային» բառերը փոխարինել «Բաճկոն՝ ձմեռային» բառերով.

բ. ուժը կորցրած ճանաչել 20-րդ ենթակետը.

4) N 3 չափաքանակի աղյուսակին հաջորդող 8-րդ կետի՝

ա. 9-րդ ենթակետում «Կոստյում՝ ձմեռային, դաշտային» բառերը փոխարինել «Բաճկոն՝ ձմեռային» բառերով.

բ. 17-րդ ենթակետում «1 հատ» բառերը փոխարինել «3 հատ» բառերով.

գ. 20-րդ ենթակետում «4 տարի» բառերը փոխարինել «5 տարի» բառերով.

դ. 20-րդ ենթակետից հետո լրացնել 21-23-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«21) մահակի պատյան 1 հատ 5 տարի,

22) արցունքաբեր գազի պատյան 1 հատ 5 տարի,

23) ձեռնաշղթայի պատյան 1 հատ 5 տարի».

5) ուժը կորցրած ճանաչել N 3 չափաքանակի աղյուսակին հաջորդող 10-րդ

կետը.

6) N 3 չափաքանակի աղյուսակին հաջորդող 11-րդ կետից հետո լրացնել 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12. Բրդյա բերետը, ինչպես նաև մահակի, արցունքաբեր գազի և ձեռնաշղթայի պատյանները հատկացվում են պահակային ծառայություն իրականացնող զինծառայողներին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2022 թ. _____ ____

Երևան